ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 օգոստոսի 2020թ. թիվ 581-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի, «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի և «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի միջև 26.06.2020թ. կնքված համատեղ գործունեության համաձայնագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգի փողոցի վրա տեղադրված տնակային ավանի բնակիչներից ընդունված դիմումների ուսումնասիրության և շահառու ընտանիքների ընտրության նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

1) Ս/թ օգոստոսի 11-ից այցելել «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ին դիմած ընտանիքներին և կատարել ուսումնասիրություններ:

2) Երկշաբաթյա ժամկետում ընտրված երկու ընտանիքների թեկնածությունները ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին:

3. Սույն որոշման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 7
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. օգոստոսի 7-ի
թիվ 581-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հրահատ Ստեփանյան - աշխատանքային խմբի ղեկավար, «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի տնօրեն /համաձայնությամբ/

Աշխատանքային խմբի անդամներ.

Հարություն Այվազյան - ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական
Ռուբեն Խանզադյան - ՀՀ Լոռու մարզպետի օգնական
Սոնա Ազարյան - «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ ծրագրերի համակարգող /համաձայնությամբ/
Վլասիկ Անդրեասյան - Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի առաջատար մասնագետ /համաձայնությամբ/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

8/7/2020

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ